Ռոմանտիզմի ժամանակաշրջանում սիմֆոնիան բազմաթիվ փոփոխություններ է կրում. խախտվում է քառամաս ցիկլը: Հ.Բեռլիոզի «Ֆաուստ»-ով սկիզբ է դրվում ծրագրային սիմֆոնիզմին, որն իր երևակայան գագաթնակետին հասնում Գ.Մալերի արվեստում, երբ սիմֆոնաներում ավելանում են մասերը, մեծանում է նվագախմբի կազմը և ներառվում են երկուսից երեք երգչախումբ: Սիմֆոնիան դառնում է վոկալ շարքի, սիմֆոնիայի, կանտատ-օրատորիալ ժանրերի միահյուսում («Երգ Երկրի մասին» սիմֆոնիա): Սիմֆոնիկ ժանրը կրկին փոփոխություններ է կրում արդեն էքսպրեսիոնիզմի ժամանակաշրջանում. Նկատվում է սիմֆոնիայի կամերայնացում, այսինք կտրուկ փոքրացում՝ բոլոր առումներով (Ա.Շյոնբերգ, Ա.Տերտերյան):

Այսպիսով՝ սիմֆոնիկ ժանրը, ինչպես տեսնում ենք, բարդ մոնումենտալ ժանր է, որը ենթադրում է զարգացում, այս ժանրի ենթաժանրերն են համարվում Սիմֆոնիան (բազմամաս դրամատուրգիական հիմք ունեցող ստեղծագործություն), Սիմֆոնիկ նախերգանքը (միամաս ծրագրային երկ), Սիմֆոնիկ պոեմ, Ռապսոդիան, Սիմֆոնիկ սյուիտը, Ֆանտազիան, Կոնցերտը:

Երաժշտական մյուս խոշոր ժանրը Օպերային ժանրն է: Այն առաջատար ժանրերից է՝ հասարակության կողմից մեծ պահանջարկ ունեցող: Օպերայում սինթեզվում են տարբեր արվեստներ. դրամա, երաժշտություն, դերասանական արվեստ, ռեժիսուրա, կերպարվեստ, պարարվեստ և այլն: Օպերան սկիզբ առնելով 17-րդ դարից Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում, կրկին ժամանակի ընթացքում կրում է բազմաթիվ կառուցողական փոփոխություններ: Ժանրը սկզբում կոչվել է drama per la musica (ողբերգություն՝ երաժշտության մեջ), որոնց հիմքում անտիկ սյուժեներն էին (Օրփեոս, Էվրիդիկե,

Натюрморт с армянскими музыкальными инструментами
Автор: Хачатрян Меружан

Դիդոնա և այլն) և բնորոշվում էին որպես պատմա-առասպելական բնույթի սերիա-օպերաներ՝ երեք գործողությամբ և պարային ինտերմեդիաներով (դադարներ): Իտալական օպերային զուգահեռ Ֆրանսիայում կոմպոզիտոր Ժ.Բ.Լյուլին հանդիսանում է որպես օպերա-բալետ ժանրի հիմնադիր: Սկզբում մեծ տուրք էր տրվում երգիչների վիրտուոզությանը, արտաքին էֆեկտներին, որի ժամանակ տուժում էր օպերայի գաղափարական կողմը: Այդ իսկ պատճառով Գերմանիայում կոմպոզիտոր Ք.Գլուկը կլասիցիզմի

շրջանում հանդես եկավ օպերային առաջին ռեֆորմով, որտեղ հստակ ձևակերպեց իր պահանջները՝ գրական տեքստի և երաժշտության դրամատուրգիայի նկատմամբ, մեծ նշանակություն տալով լիբրետոներին (օպերային երաժշտությանը համապատասխանեցված տեքստ): Երաժշտությունը պետք է բխեր գրական տեքստից: Օպերային ժանրի մյուս նորարարությունը կատարում է Վ.Մոցարտը, հիմք դնելով կոմիկական օպերային ժանրին և օպերային դրամայի ժանրին, որոնցում դիմում է գերմանական զինգշպիլի ավանդույթին (խոսելով երգել): Կլասիցիզմում ծնվում է նաև փրկության օպերայի ժանրը (Լ. վան Բեթհովեն «Ֆիդելիո»): Ռոմանտիզմի շրջանում Ազգային դպրոցների հիմնադրվելուց հետո ստեղծվում են պատմա-հերոսական, քնարա-հոգեբանական, կենցաղային սյուժեներով օպերաներ: Այդ ժամանակաշրջանի երկու հակառակ հսկաներ օպերային ժանում թողնում են իրենց անգնահատելի դերը, Ռ.Վագները Գերմանիայում, Ջ.Վերդին՝ Իտալիայում: Նրանց կողմից օպերային ժանրը կրկին ենթարկվում է կառուցվածքային փոփոխության: Ջ.Վերդին, որպեստ իրատես կոմպոզիտոր թողեց մեծ ժառանգություն իտալական օերայի ավանդույթների պահպանմամբ, իսկ Ռ.Վագները հրաժարվեց իրար հաջորդող համարային սկզբունքներից և ներմուծեց միջանցիկ զարգացման սկզբունքը: Նվագախմբի դերը դարձավ առաջնային, որին սկսեցին ենթարկվել երաժշտական մնացած էլեմենտները: Այդ փաստը նորարաություն էր նվագախմբային և վոկալ արվեստի մտածողության մեջ: Ռ.Վագներն առաջինն էր, ով գրում էր իր օպերաների համար չափածո լիբրետոներ: Նրա օպերաները կարծես սիմֆոնիզացվեցին, արիաները փոխարինվեցին նոր վոկալ մեներգային համարներով՝ մենախոսություն, պամություն: Երաժշտության մեջ ներմուծվեց լայթմոտիվային սկզբունքը՝ այսինքն յուրաքանչյուր կերպար բնորոշվեց իրեն հատուկ երաժշտական մոտիվով: Օպերային ժանրում ռուսական երաժշտության մեջ ստեղծվեցին պատմական և հեքիաթային օպերաներ (Մ.Գլինկա, Ն.Ռիմսկի-Կորսակով): Օպերային արվեստը, ինչպես և մյուս արվեստները ենթարկվեցին ժամանակի պահանջներին և հասարակության թելադրանքին, ուստի 19-20դդ ևս օպերային արվեստում ներմուծվեցին իմպրոսիոնիզմի, էքսպրեսիոնիզմի, նեոկլասիցիզմի երաժշտական տարրեր, որոնք նույնպես իրենց արժեքը թողեցին համաշխարհային երաժշտության պատմության ասպարեզում:

Երաժշտական ժանրերի, ենթաժանրերի դասակարգման փաստերի մասին կարելի է խոսել անվերջ: Ընդհանրացնելով, փորձենք ի մի բերել երաժշտական ժանրերի դասակարգումը՝ կարևորագույն ասպեկտների տեսանկյունից:

Երաժշտական ժանրերը կարող են բաժանել տիպերի.

Մոնումենտալ, մինյատյուր, կամերային ժանրեր (Օպերա, Սիմֆոնիա, Կվարտետ, Սոնատ և այլն):

Երաժշտական ժանրեր՝ ըստ կատարման վայրի (երաժշտա-բեմական՝ էստրադային երաժշտություն, եկեղեցական՝ մեսսա, պատարագ, պլեներային՝բացօթյա, կինոերաժշտություն և այլն):

Երաժշտական ժանրեր՝ ըստ կատարողական կազմի (նվագախումբ, երգչախումբ, կվարտետ, կվինտետ, մեներգ և այլն):

Երաժշտական ժանրեր՝ ըստ բնույթի և բովանդակության (քնարական, պատմական, էպիկական, ողբերգական և այլն):

Երաժշտական ժանրեր՝ ըստ տեմպային կամ կառուցվածքային առանձնահատկությունների (ռոնդո, անդանտե, ադաջիո, բոլեռո և այլն):

Երաժշտական ժանրեր՝ ըստ ստեղծագործության կառուցվածքի (սոնատ, կվարտետ, կոնցերտ և այլն):

Վերոնշյալ երաժշտական ժանրերի դասակարգման սկզբունքները ենթակա են շարունակական ուսումնառության, քանզի երաժշտական ժանրերն իրենց տարրերով՝ ենթարկվում են պարբերաբար ժամանակային փոփոխությունների և զարգացումների, իսկ յուրաքանչյուր ժամանակաշրջանում, անհատ ստեղծագործողները ևս ժանրերին հաղորդում են նոր մարմնավորումներ և ձևաբանական նորարարություններ:

Երաժշտագետ, կոմպոզիտոր
Музыковед, композитор
Հեղինե Բարսեղյան
Егине Барсегян
Гагик Гайкович
Погосян-Хахбакян

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

ДУХ АРМЯНСКОЙ МУЗЫКИ В САНКТ-ПЕТЕРБУРГЕ

Վերջերս Սանկտ Պետերբուրգում և Լենինգրադի շրջանում թևածում է հայկական ոգին: Ավանդական երաժշտական գործիք, հրաշք ծիրանափող դուդուկի ելևէջները պարուրել են մթնոլորտը…

Սանկտ Պետերբուրգում և նրա սահմաններից դուրս մեծ ճանաչում ձեռքբերած դուդուկահար, միջազգային մրցույթների դափնեկիր Վարդան Հարությունյանն իր համերգային գործունեության շրջանակներում սկսեց համագործակցել Հայաստանից ժամանած տաղանդավոր երգահան, երաժշտագետ, երգեհոնահար Հեղինե Բարսեղյանի հետ:

Նրանց համատեղ երաժշտական գործունեության շրջանակներում կազմակերպվեցին մի շարք համերգային ծրագրեր, և հայտնի դահլիճները մեծ շուքով և բարձր ծափահարություններով ողջունեցին հայ երաժիշտների անզուգական երաժշտական սիմբիոզը:

Հայկական դուդուկի և ազնվական երգեհոնի համատեղ հնչողությունը դարձավ երաժիշտների դավանանքը, իսկ հայկական հոգևոր և ժողովրդական երաժշտության ելևէջները դարձան ունկնդիրների զգացական մակարդակում արտահայտվող ամենահուզիչ, սրտաբուխ և հոգեթով տպավորությունների արդյունք:

Հայկական երաժշտության նմանօրինակ մեկնաբանումը դուդուկի և երգեհոնի համադրությամբ՝ թերևս նրանց հաջողության գրավականը դարձավ: Կոմիտասի, Եկմալյանի, Նարեկացու, Շնորհալու, Տարոնացու, Սայաթ-Նովայի երաժշտական գանձերը անտարբեր չթողեցին նույնիսկ ռուսազգի ամենախիստ ունկնդրին. դա է վկայում բոլոր կայացած համերգների ընթացքում նրանց հուզված հայացքներն ու բարձր ծափողջույնները, քանզի հայ հոգևոր և աշխարհիկ երաժշտության մոգական հնչեղությունը բացում են անգամ ամենափակ ու քարացած սրտեր, հոգիներ…

Հարգանքի է արժանի դուդուկահար Վարդան Հարությունյանի և երգեհոնահար Հեղինե Բարսեղյանի համատեղ համերգային գործունեության ընթացքում նմանօրինակը չունեցող հայկական անզուգական օրորների շարքի կատարումը՝ երգեհոնահարի

պարզ ու բնական երգային ձայնի մատուցմամբ և դուդուկի, ինչպես նաև կլարնետի պրոֆեսիոնալ համադրությամբ: Դա յուրօրինակ փայլ է հաղորդում նրամց համերգային բազմաբովանդակ ծրագրին:

Այլևս դուդուկահարի և երգեհոնահարի համատեղ երաժշտական գործունեությունը կրելու է շարունակական բնույթ, և, շուտով, նրանք համերգներով հանդես կգան ՌԴ Սանկտ Պետերբուրգի մի շարք այլ հայտնի համերգասրահներում, ինչպես նաև Պսկով քաղաքում, Սասնովյան Բոռի շրջանում, Տվերում, Մոսկվայում և այլ քաղաքներում:

Մեր երաժիշտների՝ հայկական ժողովրդական երաժշտության ճիշտ մատուցումը հարգանքի է արժանի, քանզի հայրենիքի սահմաններից դուրս հայ մշակույթի պահպանումն ու տարածումը ամենակարևոր նպատակներից է և, իհարկե, հայրենանվեր գործունեության արդյունք: Մաղթում ենք նրանց մեծ բեմեր և նորանոր ձեռքբերումներ: Հպարտ ենք նման տաղանդաշատ հայ զավակների շնորհիվ իրականացվող հայապահպան գործունեության համար:

Լուսինե Բարսեղյան
Лусине Барсегян

РУБРИКА «ЛИТЕРАТУРНЫЙ УГОЛОК»

ԼՈՒՍԻՆԵ ՎՐԵԺԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
ЛУСИНЕ БАРСЕГЯН

Մանկավարժ-հոգեբան, Լենինգրադի մարզի, Վսեվոլոժսկի շրջանի, Կուդրովո քաղաքի «Մանկավարժա-հոգեբանական, բժշկական և սոցիալական օգնության» պետական համայնքային կենտրոնի տնօրեն

Педагог-психолог, директор государственного муниципального центра «Педагогико-психологическая, медицинская и социальная помощь» города Кудрово, Всеволожского района Ленинградской области

Լուսինե Վրեժի Բարսեղյանը, 2010թ. բնակություն հաստատելով ՌԴ-ում, երբեք չի հեռացել հայրենիքի ակունքներից: Հայրենիքի նկատմամբ ունեցած նրա սերն ու հավատարմությունը, հոգատարությունն ու սրտացավ լինելու փաստը մշտապես արտահայտվել են հայրենիքի սահմաններից դուրս՝ իր ակտիվ գործունեությունը ծավալող հայուհու բանաստեղծական պոեմներում, որոնցից մեկը կներկայացվի ստորև:

Лусине Врежовна Барсегян, поселившись в 2010г. в России, никогда не покидала истоки Родины. Ее любовь и верность Родине, забота добродушной армянки, развернувшей активную деятельность за пределами родины, всегда выражались в поэтических произведениях автора, одна из которых будет представлена ниже:

***

Փակե՛ք չարը, բարի՛ն բացեք
Ու տարածե՛ք լույսը հույսի,
Այն կբերի նոր առավոտ
Ու մի ցերեկ՝
Մաքուր ու պարզ,
Ջերմ, արևոտ…
Անէական մի նեղ կածան
Ու վերեւում մի ծիածան:
Եթե նայենք՝ կնկատենք
Երկա՛ր, անմահ մի արահետ
Ու մի ճամփա՝ առհավետ...

***

Դե գնացե՛ք, փնտրե՛ք, գտե՛ք
Կապանքապատ ու ժանգոտված
Կուռ բանալին...
Այնքա՛ն գործ կա
Արարելու ու բանալու:
Քանզի կյանքի, հայի՛ կյանքի
Ճամփան դժվար՝ լի է
Ժանգոտ ու փչացած,
Անկենդան ու անշնչացած,
Անհոգի ու անսրտացած
Կողպեքներով, կապանքներով:

***

Տե՛ր իմ, տու՛ր ինձ գեթ մեկ անգամ
Քո երկնային զորությունից,
Խաչապատկեր ու սրբագիծ
Արքայության բաց դռներից,
Հերոսների հոգիներով
Լուսավորող ու առկայծող,
Սակայն ցավոտ կորուստներից
Մեր սրտերում բոցավառվող՝
Ցավից, դավից ու կարոտից,
Հայի դառը պատմությունից,
Դարեր անցած ու մաքառած,
Մահվան կանչով այն պարուրված,
Թանձր արյամբ միշտ ողողված,
Դավաճանված, հուսահատված,
Ահաբեկված ու մասնատված,
Անարդար ու խավարածին,
Ստահող ու մտացածին,
Դաժան ու բիրտ,
Նենգ կասկածի, անսիրտ լացի,
«Կուրացածի» սուտ ծիծաղով
Այն ներծծված՝ ցնորք ցավով,
Դավադրության դառը յուղով ու կսկիծով
Պատված, պարտված՝
Կոշտ բանալին...
Կուռ բանալին...
Կյանքի ժանգոտ բանալին...

***

Գոնե պիտի ջանալ, ստուգել,
Կրկին փորձել, ապացուցել...
Դո՛ւք էլ փնտրեք մի հին,
Ուժեղ ու դիմացկուն
Կուռ բանալի...
Կոշտ բանալի...
Կյանքի ժանգոտ բանալի...

***

Ու կբանամ օր ու գիշեր,
Տարիներով հասնեմ դարեր,
Վերափոխեմ ՝ պատմություններ,
Ետ պտտեմ ես անիվներ՝
Կյանքի, կամքի, ճակատագրի,
Պարտությունններն անգամ
Դարձնեմ հաղթանակներ...
Գոնե փորձեմ չվարանել,
Մահվան գուժը վերափոխեմ՝
Անմահ կյանքով ու աղոթքով:
Դավաճանին՝ ես նվիրեմ
Մի բուռ հոգի,
Որ մեր վիշտը շուտ ամոքվի,
Ստախոսին՝ զուլալ մտքեր
Ու արարքներ,
Ոճրագործին՝ մի լայն ժպիտ
Ու հսկա սիրտ,
Թուլամորթին՝ մի անվրեպ
Ու թանկ խորհուրդ
Կնվիրե՛մ, կտա՛մ անվերջ:
Բարիության կաթիլներով
Ես կջրեմ չոր ու ցամաք
Ու անցամաք երազանքներ:
Թուխ ամպերով կչերմացնեմ
Նենգ հոգիներ:
Սիրտս դարձնեմ ես կացարան՝
Անտուն, անճար էակներին,
Խեղճ ու տկար հոգիներին՝
Կգահաղրեմ, կնվիրեմ
Մի կաթիլ փառք:
Եսասերին՝ զրկեմ եսից,
Ցուցամոլին՝ մոլի փայլից,
Ուրացողին՝ ուրույն մեղքից,
Ստորացողին՝ օճառապատ,
Էժանագին սուտ քծնանքից:
Ատելություն քարոզողին
Կնվիրեմ Նարեկացի...

***

Ես կփորձեմ բանալ, բացել,
Կռվել, տանջվել ու մաքառել,
Ճեղքել, կոտրել ու տապալել
Կողպեքները, կապանքները՝
Հայի բախտի,
Հայ պանդուխտի
Սրբադասված Հերոս հայի
Ծո՛վ ցավերը...
Կորուստները…
Արցունքները...
Լցված սրտերն ու մտքերը…
Բանված կյանքերն
Ու անողոք, դաժան, անգութ
Ճակատագրերն անհագուրդ…

***

Ու երանի՛ ամեն մեկս
Փնտրենք, գտնենք,
Գործի դնենք մեր փրկարար
Բանալիներն անգին, արդար:
Գոնե մի քիչ կլակասի
Ու կչնչվի ցավը, դավը
Ու կապանքը՝ հայի բախտի,
Հայ պանդուխտի
Ու սուրբ ուխտի...

***

Հազար ու մի անգութ ցավից,
Այսքան անթիվ ու անհամար
Դաժանածին բարբաջանքից
Չարով պատված ու սեւակնած,
Անթթված, խեղդող օդից՝
Գոնե հանկարծ իմ բանալին
Չդադարի բանալ, բացել
Լուսավորել ու ակնածել:

***

Երանի՛ մեր բանալիներն
Անէական, անգին ու սուրբ՝
Կոշտությունից ձեռբազատված
Ու դարձած նուրբ՝
Լինեն...
Մնան հասանելի
Ու տանելի...

***

Տե՛ր իմ, տու՛ր ինձ գեթ մեկ անգամ
Քո երկնային զորությունից,
Խաչապատկեր ու սրբագիծ
Արքայության բաց դռներից,
Լո՛ւյս բանալի…
Հո՛ւյս բանալի…
Կյանքի, սիրո ու հավատքի
Ավետաբեր մի ԲԱՆԱԼԻ…

РУБРИКА «НОВЫЕ ПУБЛИКАЦИИ»

В издательстве «Наукоемкие технологии, учрежденном ООО «Корпорацией «Интел Групп» вышла в свет монография кандидата филологических наук, доцента кафедры Центральной Азии и Кавказа Восточного факультета СПбГУ, члена Попечительского Совета, главного редактора газеты «НАШЕ ДЕЛО» Донары Мкртчян

«АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРНАЯ ЖИЗНЬ ПЕТЕРБУРГА С XVIII ВЕКА ДО ПЕРВЫХ ТРЕХ ДЕСЯТИЛЕТИЙ XX ВЕКА»

Монография посвящена изучению литературной жизни армянской общины Санкт-Петербурга XVIII–XIX веков, а также первых двух десятилетий XX века. В его основе документы и архивные материалы из библиотек и частных коллекций Республики Армения и Российской Федерации, Санкт-Петербургского государственного университета, РНБ, БАН, ИВР РАН. Также источниками выступили периодические издания и архивные рукописи, хранящиеся в историческом архиве (РГИА) и в фондах Центрального государственного архива Санкт-Петербурга (ЦГА СПБ).

В книге систематически и хронологически представлены армянская литературная среда Санкт-Петербурга на протяжении почти трех веков.

Литературно-культурная деятельность армян, ведущая отчет с основания Санкт-Петербурга, имеет большое значение для современной армянской общины. Данное исследование важно для изучения истории армяно-российских культурных и литературных связей.

Петербург занимает важное место в истории армянской культуры и литературы. Почти три века Петербург был перекрестком армянской литературной жизни, центром обсуждения литературно-эстетических вопросов.

Произведения, созданные в Санкт-Петербурге, можно разделить на две группы:

- Созданные непосредственно в среде данной армянской общины.
- Произведения, написанные армянскими писателями в период их проживания в Петербурге.

Хронологически нижней границей исследования является начало XVIII века, которое ознаменовалось формированием армянской общины Санкт-Петербурга. Предметом изучения автора стали рукописи и их колофоны, написанные в 1730–50-ые годы и являющиеся первыми свидетельствами литературной жизни общины. Важными произведениями периода 1760–70 гг. являются три Оды, посвящённые Екатерине II.

В монографии в качестве самостоятельных литературных сочинений рассматриваются изданные в армянской типографии Петербурга в 1780-е годы книги и их колофоны. Важно отметить, что произведения, созданные в Петербурге в XVIII веке, можно характеризовать как «дворцовые», «императорские», тесно связанные с литературой Екатерининской эпохи.

Вторая глава монографии посвящена армянской литературной жизни Петербурга в XIX веке. В ней проанализированы литературные произведения, созданные в новой политической ситуации XIX века, а также деятельность армянских студенческих союзов и групп того времени.

Также в этой главе рассказывается о литературно-общественной деятельности нескольких поколений рода Патканянов (Патканових) в Петербурге, их связях с представителями русской академической науки того времени. Был изучен недолгий петербургский период жизни и деятельности Микаэла Налбандяна.

Верхняя хронологическая граница исследования – первые десятилетия XX столетия, время создания школы арменоведения в Санкт-Петербурге, а также анализируется деятельность литературно-общественных организаций, издаваемая ими периодика, книжные издания и формирования коллекции местных армянских рукописей.

Отдельное внимание уделено петербургскому судопроизводству над Ованесом Туманяном в 1911 году, его встречам с представителями русской интеллигенции Петербурга после оправдания поэта. Рассматривается роль дореволюционного Петербурга и постреволюционного Ленинграда в формировании мировоззрения и художественного мышлении Ваана Теряна и Егише Чаренца.

Если создаваемая в XVIII веке литература была направлена на российский царский двор, с целью поднять вопрос об освобождении Армении, то с первых десятилетий XIX века она становится так называемой «студенческо-народной» литературой, тесно связанной с общерусской революционной литературой.

С армянской литературной жизнью Петербурга была тесно связана местная школа арменоведения. Проводимые научные исследования, издание трудов армянских средневековых историков, обсуждения различных историографических вопросов напрямую были связаны с продолжением традиций армянской литературы.

Практическая значимость монографии заключается в систематическом и всестороннем представлении источников и литературных произведений, связанных с армянской литературной жизнью в Санкт-Петербурге. Это помогает прояснить ряд вопросов, связанных с историей армянской литературы, а также делает работу полезной для анализа местной истории литературы разных сообществ.

Монография адресована филологам, историкам, востоковедам, богословам, специалистам в области теологии, искусства, а также широкому кругу читателей.

РУБРИКА «ШКОЛЬНЫЕ НОВОСТИ»

ԱՅՍ ՀԱՒԱՏԻՑ ՄԵԶ ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ԽԱԽՏԵԼ. Ո՛Չ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ, Ո՛Չ ՄԱՐԴԻԿ, Ո՛Չ ՍՈՒՐԸ ԵՒ Ո՛Չ ՀՈՒՐԸ, Ո՛Չ ՋՈՒՐԸ ԵՒ Ո՛Չ ԷԼ ՈՐԵՒԷ ԱՅԼ ԴԱՌՆ ՀԱՐՈՒԱԾ...

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

Մեծ պահքին նախորդող հինգշաբթի օրը Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Սուրբ Վարդանանց տոնը, որը խորհրդանշում է 451 թ. Ավարայրի ճակատամարտում հայրենիքի և քրիստոնեական հավատքի համար նահատակված Վարդանանց զորավարների և 1036 մարտիրոսների հիշատակության խորհուրդը:

Ըստ ավանդույթի ՝ ՀԱԵ Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոնը յուրաքանչյուր տարի կազմակերպում է որևէ հետաքրքիր միջոցառում :

Այս անգամ աշակերտներն ու կազմակերպիչներն էլ ավելի մեծ ոգևորությամբ ու պատասխանատվությամբ էին պատրաստվել:

«Կյանքով ու մահով՝ ծառա քրիստոսին» խորագիրն էր կրում այս տարվա միջոցառումը:

Միջոցառմանը ներկա էին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի Սանկտ Պետերբուրգի Սուրբ Կատարինե հայկական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Ղևոնդ քահանա Ցյոմկինը, ուսուցչական ողջ անձնակազմը, ծնողները, աշակերտները:

Միջոցառումը կազմակերպել էին կենտրոնի ուսուցիչներ Մարիա Ներսիսյանը, Անի Սահակյանը, Սուսաննա Գաբրիելյանը, Հեղինե Բարսեղյանը, Սոնյա Օհանյանը:

Տոնին նվիրված հանդիսությունը սկսվեց դպրոցի տնօրեն Բելլա Ավագյանի ողջույնի խոսքով և տեր Ղևոնդ քահանա Ցյոմկինի «Հայր մեր» Տերունական աղոթքով:

Վարդանանց տոնին նվիրված միջոցառումը ներկայացվեց յուրահատուկ կառուցվածքով՝ բաղկացած երեք մասից :

Դպրոցի ՀԵՊ ուսուցչուհի Անի Սահակյանը ներկայացրեց Վարդանանց պատերազմը, տոնի խորհուրդը և պատմական նշանակությունը :

Ուսուցչուհին հետաքրքիր և բովանդակալից կերպով անդրադարձավ տոնի խորհրդին՝ շեշտելով՝ «Ավարայրը քրիստոնյա աշխարհի առաջին ու միակ ռազմական բախումն էր, ուր լույսի և խավարի, կյանքի և մահվան, հավատի և հավատուրացության, հայրենիքի ու ստրկացման իրարամերժ գաղափարներն էին բախվում: Այդ բախման մեջ կարևոր էր ոգու հաղթանակը:Ահա, Վարդանանք դառնում են փայլուն օրինակ՝ իրենց կյանքով և մահով Աստծուն ծառայելով»:

Ուսուցչուհին յուրահատուկ կամուրջ էր ստեղծել Վարդանանց պատերազմի ու ներկայիս հայ իրականության միջև՝ գալով այն եզրահանգմանը, որ այժմ էլ մենք հավատի համար մղվող պայքարի մեջ ենք :

Այնուհետև հանդես եկան աշակերտները, որոնք մարմնավորում էին մերօրյա մարտիկներին՝ արժևորելով հայոց բանակի՝ Վարդանանց քաջերին արժանի ոգին: Ավարայրի ճակատամարտին մասնակցել են Մեսրոպ Մաշտոցն՝ իր գրչով , Վարդանն ՝ իր սրով, Նարեկացին՝ իր «Մատյանով», Աբովյանն՝ իր «Վերքով» , Սևակը՝ իր «Անլռելի զանգակատնով», Դեմիրճյանն՝ իր «Վարդանանքով»:

Աշակերտներն իրենց խոսքով, երգերով մեկ անգամ ևս փաստեցին, որ հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողի համար պատասխանատու լինելը հայի գոյության երաշխիքն է, Հայոց բանակում ծառայելը՝ պատվի գործ:

Միջոցառումը համեմված էր Քաջ Վարդանին և իր մարտիկներին նվիրված երգերով:

Վարդանանց քաջերի գովաբանումն իրենց արտացոլումն են գտել նաև երաժշտության ասպարեզում: Դպրոցի երգի ուսուցչուհի Հեղինե Բարսեղյանը նախ համառոտ ներկայացրեց այդ երգերի պատմությունը, այնուհետև ուսուցչուհու կատարմամբ ներկաները վայելեցին Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակավոր» շարականը :

Երգչախումբը ներկայացրեց «Պլպուլն Ավարայրի» և «Իմ հայրենյաց հոգի Վարդան» երգերը: Իսկ երգի ուսուցչուհիներ Սոնյա Օհանյանն ու Հեղինե Բարսեղյանը ներկայացրեցին «Լռեց» Երգ Վարդանայ) երգը :

Մեծ էր ներկաների հիացմունքը, երբ իր՝ «Միշտ կենդանին Վարդանանքի» հեղինակային արձակ ստեղծագործությամբ հանդես եկավ կենտրոնի վաստակաշատ ուսուցչուհի Սուսաննա Գաբրիելյանը :

Դպրոցի լեփ-լեցուն դահլիճում իշխում էր հակասական տրամադրություն. հպարտության ու ցավի արցունքները, երեխաների ելույթներին ուղեկցող ուրախ ծափողջույնները հաջորդում էին մեկը մյուսին:

Հյուրերից մի քանիսը միջոցառման ավարտին նշեցին, որ իրենք ստացան հայրենասիրության մի մեծ դաս ու կարծես նորովի բացահայտեցին այդ բառի իմաստը:

Միջոցառման ավարտին իր շնորհակալական խոսքով հանդես եկավ կենտրոնի տնօրեն Բելլա Ավագյանը:

Սուրբ Վարդանանք անկախ դիրքից ու կոչումից, իրենց կյանքը, կարողությունն ու ուժը նվիրեցին Աստծուն և հայրենիքին՝ հավատարիմ մնալով Աստծո և հայրենիքի հետ կապած իրենց սրբազան ուխտին:

Վարդանանց և մերօրյա անմա՛հ հերոսները միշտ կապրեն, քանի դեռ նրանց անունները հնչում են հայ մանկան ու պատանու ազնիվ շուրթերից:

Իր շնորհակալական խոսքով հանդես եկավ նաև սուրբ Կատարինե հայկական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Ղևոնդ քահանան՝ ընդգծելով, որ միջոցառումն անթերի էր և չկրկնվող : Տեր Ղևոնդը բարձր գնահատեց երեխաների շրջանում տարվող հայրենասիրական աշխատանքները, ներկայացրեց Վարդանանց հերոսների ազատագրական պայքարի ոգին, հերոսներ, որոնք հայրենիքը օտարի լծից ու կեղեքումներից ազատելու համար մարտնչեցին և ընկան «վասն հաւատոյ և վասն հայրենեաց»:

Անի Սահակյան
Ани Саакян

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ԶԵՆՔՆ Է...

Ս/թ փետրվարի 26-ին ՀԱԵ Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոնում տեղի ունեցավ «Մեր լեզուն մեր զենքն է» խորագրով միջոցառում՝ նվիրված մայրենի լեզվի միջազգային օրվան: Միջոցառումը IIգ դասարանի աշակերտների հետ կազմակերպել էին կենտրոնի ուսուցչուհիներ Աննա Հովհաննիսյանը և Սոնյա Օհանյանը:

Միջոցառումն սկսվեց <<Տերունական աղոթք>>-ով և ՍանկտՊետերբուրգի սուրբ Կատարինե հայկական եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ղևոնդ քահանա Ցյոմկինի օրհնությամբ:

Կենտրոնի սաները համառոտ ներկայացրեցին հայոց լեզվի զարգացման պատմությունը և հպարտությամբ խոսեցին պերճաշուք հայերենի մասին, որ ժառանգել են մեր մեծերից: Սաների խոսքը լի էր մայրենին անաղարտ ու մաքուր պահելու կոչերով ու պատգամներով, քանզի, ինչպես հայրենիքը, լեզուն ևս կարիք ունի ամենօրյա պաշտպանության:

Միջոցառման ընթացքում աշակերտներն իրենց երգերով, <<Կիկոսի մահը>> հուզիչ և անկեղծ բեմականացմամբ, հանդիսատեսին մատուցեցին մեծ բավականություն:

Միջոցառման ավարտին իր շնորհակալանքի խոսքում սուրբ Կատարինե հայկական եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ղևոնդ քահանան նշեց, որ երեխաները պետք է հավատարիմ մնան այս միջոցառման նպատակին՝ ներկայացնել մայրենի լեզվի դերը ազգապահպանման գործում, դեռահասների մեջ դաստիարակել հայրենասիրության, ազգասիրության որակներ, նրանց մեջ զարգացնել ոսկեղենիկ հայերենով հաղորդակցվելու, մայրենի լեզվի գեղեցկությունն ու սահունությունը պահպանելու ձգտում, ներշնչել օտար լեզու սովորելու, բայց մայրենին անաղարտ պահելու գաղափարը:

Իր շնորհակալությունը հայտնեց նաև կենտրոնի տնօրեն Բելա Ավագյանը:

Հայոց լեզուն ավանդվել է մեզ դարերի խորքից և, որպես ամրակուռ վահան, իր վրա է կրել ոսոխի բազմաթիվ հարվածները, բայց մնացել է անսասան: Թշնամու յաթաղանի ու հրի դեմ մեր լեզուն մագաղաթ ու մատյան է դարձել… Ու հայ ազգն այսօր հայ է մնացել միայն իր հավատքի ու հայոց լեզվի շնորհիվ…

Ուրեմն ,սիրելի՛ երեխաներ,եկեք սրբությամբ ու անաղարտ պահենք մեր մայրենի լեզուն:

Աննա Հովհաննիսյան

РУБРИКА «ШКОЛЬНЫЕ НОВОСТИ»

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՄ ԱՆՈՒՆՆ Է

Մ/թ մարտի 26-ին ՀԱԵ Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոնում կայացավ «Հայաստանը իմ անունն է» խորագիրը կրող միջոցառում:

Միջոցառումն սկսվեց Սանկտ Պետերբուրգի սուրբ Կատարինե հայկական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Ղևոնդ քահանայի օրհնությամբ և «Տերունական աղոթք»-ով :

Միջոցառումը հագեցած էր գեղարվեստական համարներով. փայլուն ելույթներով հանդես եկան հայեցի դաստիարակության կենտրոնի սաները, մանկական երգչախումբը, մանկավարժները, «Նաիրի» պարային համույթը, քանոնի, դուդուկի խմբակի սաներն ու ծնողները: Նրանք հանդես եկան Հայաստանին նվիրված բանաստեղծություններով, երգերով՝ ևս մեկ անգամ հիշատակելով հայ ժողովրդի ունեցած ճակատագիրն ու անած ուղին: սրբազան ժառանգությանը, աննահանջ պայքարով ծառայել առավել հզոր հայրենիքի և համայն հայության դարավոր ու նվիրական նպատակների իրականացման համար:

Իր շնորհակալանքի խոսքում հյուպատոս Մարիա Բաբայանը նշեց, որ անկախությունը կերտած հայ ժողովրդի ամբողջ կյանքի և կրթամշակությային գործունեության հիմնական նպատակն ու պայքարը եղել է Հայաստանը և հայ ժողովրդին տեսնել ազատ, բարեկեցիկ ու անկախ կարգավիճակում:

Աննա Հովհաննիսյան

Միջոցառման պատվավոր հյուրերն էին Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Մարիա Բաբայանը, մանկավարժներ և ծնողներ:

Միջոցառման ավարտին սուրբ Կատարինե հայկական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Ղևոնդ քահանա Ցյոմկինը իր շնորհակալությունը հայտնեց միջոցառման կազմակերպիչներին՝ կենտրոնի տնօրեն Բելա Ավագյանին, Ռուզաննա Կուրղինյանին և բոլոր մասնակիցներին և կոչ արեց հայորդիներին լինել հայրենասեր, գիտակից և ուսյալ՝ կեցվածքով, պաշտպան կանգնել հայրենի

РУБРИКА «ЛИТЕРАТУРА»

ДЕТИ ОВАННЕСА ТУМАНЯНА
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Մի առիթով Հավհաննես Թումանյանի կինը՝ Օլգա Մաճկալյանը, բողոքել է ամուսնուն, թե քիչ է տանը լինում, կարոտում են...

Թումանյանն էլ, ի պատասխան կնոջ տեղին տրտունջներին, հակադարձում է. «Չեմ եղել, չեմ եղել, հո՞ մի 10 անգամ եղել եմ...»

Սուր հումորի զգացում ուներ Թումանյանը: Նա ակնարկում էր 10 երեխաներին...

Թումանյանն ու Օլգան ամուսնացան 1888 թվականի դեկտեմբերի մեկին: Նրանք բազմիցս առիթ էին ունեցել հանդիպել նախքան ամուսնությունը: Օլգայի մայրը՝ Շուշանիկ Մաճկալյանը, բաժանվել էր Բադալ Մաճկալյանից, իսկ հետո ամուսնացել էր Թիֆլիսի հոգևոր կոնսիստորիայի միաբան Տեր-Հովհաննեսի հետ: Այդ ամուսնությունը, սակայն, պաշտոնական ձևակերպում չէր ստացել:

Թումանյանի առաջին զավակների՝ Մուշեղի և Աշխենի դաստիարակության հոգսն իր վրա էր վերցրել Օլգայի մայր Շուշանիկը, որը, լինելով անգրագետ կին, խիստ կարևորում էր թոռների լավ կրթությունը:

Աշխենն ու Մուշեղը հաճախում էին Թիֆլիսի ռուսական գիմնազիա:

Հետագայում, իհարկե, Թումանյանի մյուս երեխաները հայկական կրթություն ստացան՝ բացի Մուշեղից: Ասում են, որ Թումանյանի, Մուշեղի և Աշխենի հարաբերությունները նման չէին ծնողի և երեխաների հարաբերությունների: Այն ավելի շուտ հիշեցնում էր ընկերական մտերմություն:

Ռուսական դպրոցը գերազանց ավարտելով՝ Մուշեղը մեկնում է Սանկտ Պետերբուրգի համալսարան, որն ավարտելուց հետո վերադառնում և մասնակցում է Արևմտահայաստանի պաշտպանության կամավորների կռիվներին: Լինում է Իգդիրում, Վանում: Այնտեղ է լինում նաև նրա կրտսեր եղբայրը՝ Արտավազդը: Թումանյանը հենց որդիներից էր տեղեկանում ռազմաճակատում տիրող իրավաճակին:

Սանկտ Պետերբուրգում Մուշեղը հանդիպում է Մարիա Սոկոլսկայային: Նրանք սիրահարվում են, սակայն նրանց միությանը դեմ են լինում թե՛ Թումանյանները, թե՛ Մարիայի ծնողները, որոնք սարսափում էին այն մտքից, որ իրենց դուստրը պիտի ապրի Կովկասում: Այնուամենայնիվ, Մուշեղն ու Մարիան ամուսնանում են, ունենում են երեք երեխա՝ Անահիտը, Նադեժդան և Վիգենը:

Առաջին Աշխարհամարտից և Խորհրդային կարգերի հաստատումից հետո Մուշեղը վերադարձավ Վրաստան: Աշխատում էր դպրոցում: 1937 թվականին նա աքսորվեց Տայշեն (Սիբիր) տասը տարով՝ նամակներ գրելու իրավունքով: Բայց նամակները շատ հազվադեպ էին տեղ հասնում: Մեկ տարի անց ընտանիքը լուր ստացավ, որ Մուշեղը վախճանվել էր աքսորավայրում…

Ճակատագիրը չխնայեց նաև Մուշեղի որդուն՝ Վիգենին: Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ Վիգենին զորակոչեցին բանակ: Զինկոմիսարիատում մեքենագրուհին, որը հասկացել էր, որ Վիգենը մեծն Թումանյանի թոռն է, ցուցակից բաց է թողնում նրա անունը: Սակայն Վիգենի պատվախնդրությունը ստիպում է նրան մեկնել ճակատ: Հետագայում նա դասվեց անհետ կորածների շարքին: Պարզվեց, որ Վիգենի վաշտը ոչնչացվել է 1941 թվականին՝ Մոսկվայի մատույցներում:

Թումանյանի երկրորդ որդին՝ **Արեգը,** կոմունիստ էր:

Ասում են, որ նա լավ ծանոթ էր Միկոյանին: Ժամանակին հենց Միկոյանն է Արեգին ծանոթացրել Ստալինի հետ: Արեգին կնոջ հետ աքսորեցին Սիբիր: Նրանց միակ դուստրը՝ Սուրման, մնաց տատիկի՝ Օլգայի խնամակալության տակ: Հետագայում Սուրման մեկնել է Մոսկվա և պարզել, որ հորը գնդակահարել են 1939 թվականին, ապրիլի 2-ին:

Թումանյանի երրորդ զավակը՝ **Համլիկը,** շատ չարաճճի երեխա է եղել:Նա մեծ հետաքրքրություն ուներ լեզուների և գրականության նկատմամբ: Թումանյանը որդուն ուղարկում է Սորբոնի համալսարան ուսանելու փիլիսոփայություն: Այնտեղից նա շատ նամակներ է ուղարկում: Կենսագրականները փաստում են, որ Համլիկը Թումանյանների մեջ միակն էր, որից ամենաշատ նամակներն են պահպանվել: Նա թե՛ քույրերին, թե՛ ծնողներին առանձին-առանձին նամակներ է գրում: Ուսումն ավարտելուց հետո Համլիկը վերադառնում է Թիֆլիս, իսկ մի քանի տարի անց աքսորվում է Սիբիր: Հատկանշական է, որ առաջին աքսորից հետո Համլիկին հաջողվում է ազատվել աքսորավայրից: Նա վերադառնում է հայրենի տուն և բաժանվում է կնոջից՝ կանխազգալով, որ վտանգը դեռ չի մարել: Եվ նա իրավացի էր: 37 թվականին Համլիկը կրկին աքսորվում է Սիբիր՝ այս կերպ ազատելով ընտանիքին սպառնացող վտանգից: Թումանյանի թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը պնդում է, որ Համլիկին աքսորելու հրամանը տվել է Բերիան:

Արտավազդ կամ Արտիկ Թումանյանը տաղանդավոր նկարիչ էր:Նա բազմաթիվ աշխատություններ էր կարդում տարբեր հայտնի նկարիչների մասին: Արտիկը նույնպես կամավորական զինվոր էր և մասնակցում էր ազատագրական մարտերին: Դեկտեմբերի 3-ին «Հորիզոն» թերթում Թումանյանը կարդում է Վանում զոհվածների անունները, որոնց մեջ էր դժբախտաբար նաև Արտավազդ Թումանյան անուն ազգանունը...

Անասելի ծանր օրեր ապրեց Թումանյանը: Մանավանդ, որ նա արդեն հասցրել էր կորցնել իր երկու եղբայրներին՝ Արտաշեսին և Ռոստոմին:

Իսկ Թումանյանի վեց դուստրերից ավագը՝ **Աշխեն Թումանյանը,** եղավ Եվրոպայի շատ քաղաքներում:Ամուսնացավ քաղաքական գործչի հետ և տեղափոխվեց Երևան՝ դառնալով Թումանյանի տուն-թանգարանի տնօրենը: Ղեկավարեց թանգարանը մինչև 1966 թիվը: Աշխեն Թումանյանը վախճանվեց 1968 թվականին: Թումանյանի դուստրերը մեծ ներդրում ունեցան նրա գրական ժառանգության պահպանման գործում:

Նվարդը հոր մասին հուշագրության ստեղծեց: Մասնագիտությամբ պատմաբան էր: Նվարդը Դսեղի տուն-թանգարանի հիմնադիրներից էր և մեծ ներդրում ունեցավ նաև երևանյան թանգարանի կազմակերպման գործում:

Արփենիկը Գայանյան օրիորդաց դպրոցից էր:

Տեղափոխվել էր Մոսկվա և աշխատանքի էր անցել Նախարարական խորհրդի հայկական բաժնում: Որոշ ժամանակ անց նշանակվել էր Լենինյան հանրային գրադարանի հայկական բաժնի գլխավոր գրադարանավար: Կյանքի վերջին շրջանում հաստատվել էր Երևանում: Գրադարանավարական գործի մեծ փորձն Արփենիկը ներդրեց իր հոր անձնական, բացառիկ գրադարանի մշակման գործում:

Անուշը սովորել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցում:

Սիրել է դաշնամուր նվագել և գրքեր կարդալ: Գրել է ոտանավորներ ու քառյակներ: Նաև երկու պատմվածք՝ նվիրված հորը: Անուշը Հովհաննես Թումանյանի տասը զավակներից ամենից ռոմանտիկն ու երազկոտն էր: Նա ապրեց մի կարճ և ներքին հակասություններով լի կյանք:

Սեդա Թումանյանը ունեցել է նաև երկրորդ անուն՝ Հայկանուշ:Նրա ծնվելուց առաջ Թումանյանը հյուրընկալում է Զորավար Անդրանիկին: Վերջինս տեղեկանում է, որ ընտանիքում համալրում է սպասվում ու խնդրում է, որ Թումանյանը տղա ունենալու դեպքում զավակի անունը դնի Հայկ, իսկ աղջկա դեպքում՝ Հայկանուշ: Թումանյանն արդեն ընտրել էր Սեդա անունը, բայց չէր ցանկանում վիրավորել ու անտեսել թանկ հյուրի խնդրանքը: Սեդան մեծ մասնակցություն է ունենում Թիֆլիսի իրենց բնակարանից իրերի Երևան փոխադրման և հուշասենյակների ձևավորման գործում: Ունեցել է մեկ դուստր՝ Իրմա անունով:

Թամարը նախնական կրթությունը ստացել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցում: Հետո սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1933 թվականին մտել է Ալեքսանդր Թամանյանի արվեստանոց: Թամարը ղեկավարել է թանգարանը 1966-1989 թվականներին: Նա իրականացրեց թանգարանի մի անկյունում«Վերնատան» հուշասենյակը վերստեղծելու գաղափարը:

Զավակների հարցում բախտն անողոք եղավ Թումանյանի նկատմամբ: 10 զավակից նա ունեցավ 7 թոռ...

Донара Мкртчян,
к.ф.н., СПБГУ

РУБРИКА «ТАНЦЕВАЛЬНЫЕ ТРАДИЦИИ ГОРОДА»

В ЭТОМ ГОДУ АНСАМБЛЬ «НАИРИ» ОТМЕЧАЕТ СВОЙ 25-ЛЕТНИЙ ЮБИЛЕЙ!

В честь этого 12 апреля 2023 года состоится грандиозный концерт. Специальным гостем из Армении будет талантливая Софи Мхеян.

В Северной столице России, стремясь сплотить армянскую молодежь, в 1998 году благословением духовного пастыря армян Санкт-Петербурга, ныне главы Российской и Ново-Нахичеванской Епархии Армянской Апостольской Церкви Епископа Езраса Нерсисяна, создается армянский танцевальный ансамбль «Наири». На сегодняшний день количество воспитанников ансамбля составляет более 150 человек.

Ансамбль «Наири» непосредственным усилием художественного руководителя Ани Егорян в течение последних 7 лет отличается особой активностью, становится лауреатом многочисленных концертов и фестивалей. Лауреат 1 степени региональных конкурсов «Под одним небом», « Грани успеха», «Фейерверк национальных культур»,«Сохраняем традиции», «Осень золотая». Лауреаты 1 и 2 степени региональных конкурсов «Танцевальная мозаика», «Приморская звезда» и тд. Так же в 2022 году ансамбль «Наири» взял ГРАН-ПРИ в всероссийском армянском танцевальном конкурсе «НАЗАНИ».

Помимо традиционных ежегодных отчетных концертов, ансамбль принимает участие в городских, областных и международных мероприятиях и конкурсах, где успешно представляет культуру армянского танца, удостаиваясь восхищения и наивысшей оценки не только наших соотечественников, но и присутствующих гостей.

Ани Егорян

Художественный руководитель танцевального ансамбля «Наири»

ГАЗЕТА БЛАГОТВОРИТЕЛНОГО ФОНДА «НАШЕ ДЕЛО» – «ՄԵՐ ԳՈՐԾԸ»
главный редактор – Донара Мкртчян
գլխավոր խմբագիր՝ Դոնարա Մկրտչյան

РЕКВИЗИТЫ: Наименование получателя: БФ «НАШЕ ДЕЛО»
ИНН получателя: 7814787453
Счет для пожертвований: БИК 044030653
Наименование банка: ПАО Сбербанк
Корреспондентский счет: 30101810500000000653
Расчетный счет: 40703810655000004698

РЕДКОЛЛЕГИЯ: Арам Даниелян, Рубен Киракосян, Кнарик Мирзоян
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Արամ Դանիելյան, Ռուբեն Կիրակոսյան, Քնարիկ Միրզոյան

Номер свидетельства – ПИ №ФС 77-82222
Дата регистрации – 23.11.2021 Статус свидетельства – действующее
Наименование СМИ – «Наше Дело», газета БФ «Наше Дело».
Форма распространения – печатное СМИ газета
Территория распространения – РФ.

Тираж – 500 экз. Формат – А3 (297х420), бумага – 130 (мелованная), печать – офсетная, языки – русский, армянский
Отпечатано в ООО «Типографский комплекс «Девиз»,
195 027, г. Санкт-Петербург, ул. Якорная, д.10, кор.2, литер. А, пом. 44, заказ № ДБ-1486.
Цена свободная. Адрес редакции: 197373, г. Санкт-Петербург, ул. Планерная , д.75, к. 5, литер А, кв. 97
Email: gazeta@fondnashedelo.ru

Авторские права защищены. Любое копирование и воспроизведение текста, в том числе частичное, без указания ссылок на автора запрещено. Точка зрения авторов публикуемых материалов может не совпадать с мнением редакции. Ответственность за точность сообщаемых фактов несут авторы. Рукописи не возвращаются и не рецензируются.